յայտնել քեզի հրապարակաւ Մեր հայրական բարձր հաճութիւնը, ներկայ կոնդակով կը կարգենք, կը հաստատենք ու կ'անուանենք զքեզ Ազգետ-Հրամանատար Սուրբ Գրիգոր Մեծին կարգեն, աշխարհական դասակարգեն, և կ'ընդունինք ու կը դասենք զքեզ նոյն Ազգետական ընտրելազոյն Լեգէոնին մէջ։ Ուստի, Սիրելի Որդեակ, հրաման կու տանք քեզ որ կարենաս ազատօրէն և զատշաճօրէն հագնիլ նոյն Ազգետներուն կարգի ու աստիճանի համազգեստն և կրել օրինաւորապէս նոյն կարգին մեծագոյն չքանչանը, որ է ութանկիւն՝ կարմրագոյն խաչ, մէջը գետեղուած Ս. Գրիգոր Մեծին պատկերն, որ մետաքսեայ ծոպաւոր կարմիր ժապաւէնով վիզէ կը կախուի։ Եւ որպէս զի ո և է անտեղութեան չհանդիպի, ըլլայ համազգեստը հագնելուն ըլլայ չքանչանը կրելու մէջ, հրաման ըրինք որ քեզի տրուի այդ կարգին յատուկ եղող տպեալ սքեմին ձեւը (Schema)։ Ցրուեցաւ Հռովմ, Ս. Պետրոսի մօտ, ձկնորսի կնքով վաւերացուած, 22 Յուլիս 1925, Մեր Գահանայապետութեան չորրորդ տարին։

Ա- Սիրելի Որդեակ Մեր
Կ-ր-գիւ Մ-ի-ս-ի-ա Գ. ԿԱՐՏԻՆԱԼ ԿԱՍՊԱՐՈՒ
Ատենադպիր

Մաթոսեան Եպ. յարգանօք կ'ընդունի յեսոյ շքանշանները և Գերպ. Գուզեան ի վեր կը հանէ իր կողմանէ ևս անոր բարեմասնութիւնները և ըրած բարիքները կարօտելոց, կրթական Հաստատութեանց և Եկեղեցւոյ։ Հուսկ կը շնորհէ անոր՝ Քահանայապետին կողմանէ օրհնութիւն։ Վսեմ. Ազգետը շնորհակալութիւն յայտնելով կը խնդրէ որ թարգման ըլլայ Ն. Սրբութեան մօտ իր սրտիական զգացմանց։

Հանդէսը կ'աւարտի փառաւոր ճաշով մը ի յարգանս Ս. Պապին և Գերպ. Գուզեանի։

Խմբագրութիւնս մինչ իր ջերմագին խնդակցութիւնները կը յայտնէ վերոյիշեալ Վսեմ. Հրամանատար Ազգետներուն՝ կը մաղթէ որ իրենց արժանաւոր հետեւորդներ ունենան մեր ազգին մէջ։

ԽՄԲԳ.

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ.—Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Բազմ. 1925, էջ 254)

ՃԻԵ.

Մարտիրոսագրութեան մը մանրամասն պատմութիւնը կը դնէ մեր առջև Հ. Միքայէլ վարդապետ. այդ շահեկան տեղեկութիւնը այնպէս կը թուի մեզ՝ որ պակաս մը պիտի լեցնէ Հայ վկայաբանութեան մէջ։

Գերյարգելոյ Արբաց Հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան Վարդապետի

... Եկեսցուք յայժմ առ նորագոյն ինչ, զի լուաք թէ սակաւ ինչ խումբ պարսկական եկեալ ի սեբաստիա, իշնանեալ ոչ ումեք վնասեն, և զոր ինչ առնուն հատուցանեն, զամենս փուռս հացագործաց ինքեանց սեփականեալ, և զամենս հասարակ քաղաքացւոց թողեալ. ասած լինին թէ մերոյ թագաւորին դէմ ելեալ, որ աստի խմբով սոցին գնալոց է. նաեւ լուաք թէ թահմազն զպասրա, զնինվէ, զքէրքիւտ սեփականեալ է, է և ի ներքոյ տիզրանակերտի։ Նաեւ իբրու 20 օր է, որ ասա Եղեքտասան ամաց պատանի

digitised by A.R.A.R.@

մի, ազգաւ հայր[1] մարտիրոս անուն մարտիրոսացաւ, զրպարտութեանց հանդիպեալ, իբր երկու ամիս ի բանտի կեցեալ, ստիպեցեալ բազմիցս տանկութիւն, և նա ամենեին հաստատ մնացեալ ի հաւատս. Ներկայացուցեալ առաջի Վէզիրին, արարեալ զբազում խոստումս մեծութեան, քիւրք մեծագին, մինչև ցհինգ քսակ դրամ. և նա պատասխանեալ համարձակ դիմօք. Այս զուր է ինձ, թէ բոլոր աշխարհս տաս ոչ հաճիմ. թէ ազատելոց ես զիս ազատեա, թէ ոչ՝ հրամայեա սպանանել զիս։ Այսպէս հաստեցեալ եղեւ վճիռ զըլխատեալ ի պարմախղաբուն, և անդէն ևս հասաս պաշին իջեալ ի ձիոյ փաղակչական բանիւ երիցս խօսեալ, և գահիճն զսուրն ի ձեռին, յորդորեալ զնա դառնալ. և նա ամենեւին ոչ հաւանեալ բանից նոցին, ասացեալ է ի յոտին կանգուն կալով հար զիս. և ապա գահիճն միով հարմամբ հատեալ զգլուխ նորին. զի հայք ի նոյն օր ի շուկայս հաւաքեալ են զդրամս իբրու 40 բոլորի չափ և տուեալ գահճին, զի շուտով հատցէ. և նոյն գահիճն ունելով ընդ ինքեան զբամպակս, թաթաւեալ և թաթախեալ ի յարեան նոյնոյ, հայոց արանց և կանանց առնլով զդրամ, մասնիկ մասնիկ բաշխեալ է երեք օր գնացողացն և կեցողացն շուրջ զմարմնով նորին, և ասեն թէ զգլուխն հայոց պատրիարգն առեալ է, և զմի մատն դաղմատացիք, և ի հանդերձէ արենաթաթախ սակաւ ինչ թերևս առ մեզ ևս հասանի, զի ումեմն յանձնեալ եմ. և զլիակատար պատմութիւն սորին ի յառաւել տեղեակ եղողաց գրել տալոց եմ։ Համանապէս երկու ամ յառաջ մի պատանի ևս իբրև զայս ի սեբաստիա եղեալ է. և զայսմանէ ևս չանամ գրել տալ։...

Գերյարգութեան քում
Պատրաստական ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

Ցամի տեառն 1743ին հոկտեմբերի 17ին
գիր երրորդ ի Կոստանդնուպօլսոյ

ՃԻԶ.

Մանր ու զանազան լուրերու ժողովածոյ մըն է հետեւեալը։

Գերյարգեցելոյ Աբբայ Հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

... Բազումք կարգաւորք գոն, թէ ի լիբանանու, թէ հալէպու, թէ յէրզրումու, թէ ելանօղք քահանայք աստ ի յեկեղեցեաց հայոց, թէ գպրատնցիք և թէ այլք բազումք բաց ի մէնջ աւելի քան զքսան են։ Դաւեւ ժողովուրդն յամենայնում աւուր յեկեղեցիս լաթինի լիք են. և ստէպ քաւարան առնել տան մեռանողաց վասն, և երգիչք և սպասաւորքն հայոց կտրիճներն և տղայքն են, ուսեալ զլաթինական եղանակ և լեզու ...։ ի յոմանս եկեղեցիս յամենայնում աւուր չորս և հինգ կարգաւոր պատարագեն. երբեմն և ես երթամ պատարագել և խոստովանութիւն լսել։ Գաղատացի տէր եղիա Վ. ի մեծի համարի է. ունի զաշակերտ կարգաւորս և զերիտասարդ աշխարհականս, դաս տայ, աշակերտս հանել չանայ. ի կիրակէի և ի տօնս յեկեղ[ե]ցին սուրբ անդօնի քարոզ տայ։ ի սուրբ պետրոս երբեմն հայոց կարգաւորք, այսինքն պուռսացին, զպրզցին տանկերէն, և ըստ մեծի մասին պարտի տօմէնիկոսն չահկեցի հայկաբանօրէն, լաւ քարոզիչ է և ընդունելի յոյժ։ ի ՃԷզուիթաց եկեղեցին, ինքեանք ճէզուիթք քարոզ տան տանկերէն, մինն յառաւօտեան, մինն յերեկոյին. և սոքա ի դուռն եկեղեցւոյն եասախճի ևս կանգնեցուցանեն յաւուրս կիրակէից։ Եւ բնաւ եկեղեցիքն թէ ի վերնատունն, թէ ի հրապարակ եկեղեցւոյն լիք հայք, և ֆռա[ն]կք ոչ երևին։... Մխայլում օղլին այժմ ի դրունս մեծաւոն տանկաց շրջի ընդ աստղագիտաց նոցին վիճի և յաղթող գտանի, և ինքն ի համարի ի նոցանէ ունեցեալ լինի, այժմ զնմանէ այսպէս հուշակեցեալ լսի։...

1. Անշուշտ հայ պէտք է ըլլայ.

digitised by A.R.A.R.@

... ի կողմանէ պատերազմի ոչ ինչ երևելի գործ և զրոյց գոյ. բայց քանի մի հազար պարսիկք խաղաղութեամբ նստեալ են ի Սեբաստիա և ոչ ունք ինասեն, այլ եկեալ են զչահի որդին իւրեանց թագաւոր տանել զոր սոքա զօրօք ուղարկէն. և լսեմք թէ բազումք գլխաւորք պարսից զգուեալք են ի թահմազ գուլէն։ Եւ յայլուստ լսեմք թէ զհալէպ պաշարեալ է.... այժմ ժանտացաւն անօսրացաւ։

Գերյարգութեան քում
Անամ պատրաստական ծառայ
Հայր Միքայէլ վ. Սեբաստացի

Ցամի տեառն 1743
Նոյեմբերի 22
[Կ. Պոլիս]

Յետ որոյ եգերեցի զգիրս այս և ծալէի, հրացանք արձակեցան յերից տեղեաց, և թէ զինչ է պատճառն, ել ձայն թէ զպարսիկս կոտորեալ են սոքա և թէ այլ որպիսի կերպիւ և մասնաւորապէս զինչ արարեալ են սոքա ոչ գիտեմք...։

ՃԻԷ.

Հայ բարձրաստիճան եկեղեցականներու դասէն ոմանց տեղափոխութիւնը կը տեղեկացուի հետեւեալ գրոյն մէջ։

Գերարգեցեալոյ տեառն Մխիթարա Այրեայ հօրն իմոյ որդիական յարգութեամբ ողջոյն

... Նախնէ լվեալ էի այդ եպիսկոպոսին տեղդ զալն և զաղքատութենէ նորին, բայց ոչ միուս հայերուն որ նորապէս եկեալ են... երկու ստամպօլցի եպիսկոպոսք եկեալ են Լիվորնա, և ընդ նոցա կուռճի տէր գափրէլն, մէկին անունն մէսրոպ և միուսն աթանաս, մինն ի սոցանէ ժամանակ ինչ վանքն կացեր է և յաժմս յոյժ աղքատութեամբ հասեր են տեղն... կամք ունին Հռոմ գալու...։

Նաև եկեալ իսկ է տեղս մըսըրտամու սմն քահանայ յոհաննէս վարդապետ կոչեցեալ. ինքն կեսարու գեղեն է և աշակերտ Սէրքիս եպիսկոպոսին որ էր Էնկուրու առաջնորդ. այս անձս տեղեակ իսկ է ուղղափառութեան բայց ոչ ուղղաբարապէս վարկեալ է, վասն որոյ յատկապէս Հռոմ եկեալ է առ ի դաւանութիւն տալ և անորինումն առնելոյ։ Փոքր ինչ ինձ յայտնեաց իւր դիտմունքն, զի ետ զատկին կամի Վենետիկ գալ առ ի կրօնաւոր լինիլ ընդ Հայրութեան ձերում (որպէս յուսադրեալ է զինքն տէր ստեփանն), բայց ես այս բանիս դժվարութիւնն փոքր ինչ պարզաբանեցի իւրեան. տարօք 28 ամաց է։

Երկու ամիս կայ որ դրաչգընու դաւար եպիսկոպոսն տեղիս սուրբ ժողովին դաւանութեան գիր է յղեալ....։

Նախ քան զպատրիարքին գնալն լուաք թէ մխլայիմ օղլուն Նափոլի տեսած են...։

Անարժան որդի և ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

Ամի տեառն 1743 նոյեմբերի 23
[ի Հռովմ]

ՃԻԸ.

Ինչպէս նախորդ վաւերաթուղթերուն մէջ տեսանք, հետեւեալ գիրն ալ կը պարունակէ նորագոյն մանրամասնութիւններ՝ նոյն ժամանակի ազգային եկեղեցական ձեռնադրութեանց մէջ մերթ տեղի ունեցած անորոշութեանց ու խառնակութեանց շուրջ, որոնք Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ դժբախտ շրջան մը կազմած են։

digitised by A.R.A.R.@

Մեր նամակագիրը առ Մխիթար կը ծանուցանէ նաեւ Պետրոս Պատրիարքէն հասած նոր լուր մը։

Գերցայգեյի և գերապատուելի տեառն Մխիթարա Աբբայի մեծաւ յարգութեամբ խոնարհաբար ողջոյն

... Լիվորնայ եղեալ եպիսկոպոսն ամսիս 15 հասին տեղս յոյժ չքաւորութեամբ. եւ մին աւուր ծաղկազարդ գրով զանազան կոնտակս ցոյց տվին վրդանէս եպիսկոպոսին, քահանանութեանց և եպիսկոպոսութեանց իւրեանց, թաքուցանելով զայն ամենայն զոր հարկաւոր էր ծանուցանէլն առ ի խնդրել զտնօրինումն, բայց մեք՝ նախ քան իւրեանց ժամանելն ալիկուսայու լվեալ էաք բանին ուրախութիւնն, զի կուրեի տէր գափրիլն ծանուցեալ էր ամենեցուն Լիվորնայ եղելոց. վասն որոյ հարկադրեցաք նոցա ասել զճշմարիտն. նաև ունէին մի միայն գիր ըստամպօլու Վ.իքարէն առ սուրբ ժողովն, որով Վ.իքարն ծանուցանէր զամենայն ինչ, այսինքն թէ սոքա երկուսն ի միասին ումեմեմ էնկուրու առաջնորդէ սարկաւարք եղեալ են, եւոյ ոմն Աբէլ եպիսկոպոսէ քահանայ գնացեալ մերոց ի սիս յոհաննէս մանզուլ կաթուղիկոսէ կաշառօք եպիսկոպոսք եղեալ են և անտի շրջագայելով այսր և անդր եկեալն ըստամպօլ. նախ քան իւրեանց հասանիլն Թոխաթցի տէր յոհաննէսն գրած է Վ.իքարին թէ այն Աբէլ եպիսկոպոսն ոչ է եպիսկոպոս. սոքա լսելով այս գրած են նոր օրհնող նոյն յովհաննես կաթուղիկոսին առ ի ստեղիլ. և նա պատասխաներ է թէ յաժմս լաւ մտիս չէ, եւոյ ձեզ ծանուցից թէ ես օրհնեալ եմ զնա թէ ոչ. և սոքա առանց ըսպասելոյ երկրորդ պատասխանոյն անձեր են անատօլի և ումեմեմ պոսխորոն անուն եպիսկոպոսէ վիրստին քահանայ օրհնված են։ Եւ այս բանիս կաթուղիկոսէն գիր եկեր է թէ Աբել եպիսկոպոսն իրաւի եպիսկոպոս է. այս վերոյ ասացեալն ամենայն Վ.իքարն իւր գրիւն ծանուցանէ սուրբ ժողովին, նաև ասելով թէ սոքա դիմեցին առ սուրբ աթոռն առ ի առնուլ զտնօրինումն և արձակումն ամենայն իւրեանց ապօրինաւոր բանից. բայց եթէ հնար ի[է] խնդրեմ սուրբ ժողովն ոչ թույլ տալ սոցայ առ ի դառնալ ի յարեւելս վասն ալքելելոյ զմեծ գայթակղութիւնն ի մէջ ուղղափառաց. բայց իւրեանք այս ամենայն վերոյասացեալն ոչ խոստովանին պարզութեամբ. նաև ասեն թէ նոր ճանաչած են զուղղափառութիւնն և ոչ ումեքէ առձակում առեալ են։ Սոյնս ասեն առ թեթեւացուցանել զ[յ]անձանս իւրեանց, բայց լաւ տեղեակ են ուղղափառութեան, մանաւանդ այն օր վանքէն ելած է որ յաժմս աթանաս կոչի...։

Պետրոս պատրիարքէն գիր եկաւ Վրդանէս եպիսկոպոսին, ուր ծանուցանէ իւրոյ երշանկութեամբ հասանիլն ի յաղեկսանդր[իա] և անդր Ֆրանսրզի պալեօզէն յոյժ սիրով ընդունիլն ի պալատս իւր. նաև ծանուցանէ ոմն ուսէին փաշա բազում զօրաք գնալ ի լիփանան առ աւերել զվանօրայս, և անդ եղեալքն լսելով զայս, մանաւանդ պատրիարքի վանքն երեք օր և երեք գիշեր մեծաւ աղերսանօք ազօթս արարեալ են. եւ քանի աւուր խապար եկեր թէ նոյն փաշան անկարծակի մահով սատակեր է և իւրային զօրքն ՀԷրուցան եղեր են։ Նոյն պատրիարքն աղեքսանդրու քալեր է կիպրոս և անտի իւր վանքն. սոյն գիրս տոն ստմէնիքօն թարգմանել տվաւ և եւ կարտենալ քարաֆին և սա ֆափին ձեռն հասոյց որ յոյժ ուրախութեամբ ընկալաւ։...

Ամի տեառն 1743 դեկտեմբերի 21 [Պատկերահան] Յոհաննէս

[ի Հռովմ]

Եպիսկոպոսաց կոնտակքն ցոյց կուտայ թէ ըստ կարգի և արարողութեան ՝արարեալ են եպիսկոպոսք և ոչ լոկ բանիւ։

Շարունակելի Հ. ԴԵՒՈՆԴ ՏԱՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@